ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1959 Общественные науки

Վ. Ե. Ղազախեցյան

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1928—1929 ԹԹ.

Կոմունիստական պարտիայի XV համագումարը որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը ծավալելու մասին։ «Ներկա ժամանակաշրջանում,— ասված է համագումարի որոշման մեջ,— մանր անհատական գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվների մեջ միավորելու և վերափոխելու խնդիրը պետք է դրվի որպես պարտիայի հիմնական խնդիր գյուղում»[1]։ Համագումարը նշեց կոլտնտեսությունների և սովխոզների ցանցի լայնացման պլանը և միջոցառումներ մշակեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը զարգացնելու համար։

Ողջ Սովետական Միության, այդ թվում նաև Սովետական Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պայքար ծավալեցին կենսագործելու գյուղատնտեսության կոլեկտիվացումը։

Հայաստանում կոոպերատիվ շարժումը սկսեց զարգանալ հատկապես 1924 թ., երբ կազմակերպվեց Հայգյուղկոոպը։ Մինչև 1928 թ. արտադրական կոոպերատիվները շատ քիչ էին, կոոպերացիան գերազանցապես ընդգրկում էր սպառման և հայթայթման բնագավառը։ Սպառողական կոոպերացիան մեծ դեր խաղաց կոլտնտեսային շարժումը նախապատրաստելու գործում։ Նա նյութական ու տեխնիկական մեծ օգնություն էր հասցնում չքավոր և միջակ գյուղացիներին, գյուղատնտեսության մեջ արմատավորում էր պլանային տնտեսությունը և կոլեկտիվիզմի սկզբունքը։

1928 թ. սպառողական կոոպերացիայի մեջ ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների 38,5 %-ը, 1924 թ. 5,9 %-ի դիմաց։ Մի քանի շրջաններում կոոպերացման տոկոսը ավելի բարձր էր։ 1928 թ. հուլիսի 1-ի տվյալներով Մեղրիի գավառում կոոպերացված էր գյուղացիական տնտեսությունների 90 %, Երևանի գավառում՝ 52,7 տոկոսը և Էջմիածնի գավառում 51,4 %-ը[2]։

Կոոպերացիայի զարգացման հիման վրա ստեղծվեցին առաջին գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվները՝ հողօգտագործական ընկերություններ (ՏՕԶ), գյուղատնտեսական արտելներ և կոմունաներ։ Մինչև 1928 թ. սկիզբը Հայաստանում կային ընդամենը ութ գյուղատնտեսական արտել և կոմունա, որոնց մեջ ընդգրկված էին 389 տնտեսություն[3]։

1928 թ. հունվարին կայացավ ՀԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը։ Ղեկավար-

---

[1] «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, Հայպետհրատ, 1935, էջ 601։

[2] Տե՛ս Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության հաշվետվությունը (1926 թ. 1/10—1928 թ. 1/7), Երևան, 1928, էջ 19—20։

[3] Նույն տեղում, էջ 8, 14։

վելով Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XV համագումարի որոշումներով՝ պլենումը ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում դրեց կոլեկտիվացումը ծավալելու աշխատանքը։ Պլենումը որոշեց ավելի ուժեղացնել ագիտացիոն-բացատրական աշխատանքը գյուղում, ավելացնել չքավոր ու միջակ գյուղացիներին և գյուղատնտեսական կոոպերացիային հասկացվող վարկերը, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը և այլն։

Կոլեկտիվացման գործը անմիջապես կազմակերպելու և ղեկավարելու համար Հայգյուղկոոպի սիստեմում ստեղծվեց առանձին բաժին՝ Կոլտնտսեկցիա։ Կոլտնտսեկցիան և ՀԿ(բ)Պ Կենտկոմի գյուղբաժինը զգալի աշխատանք կատարեցին առաջին կոլտնտեսությունները կազմակերպելու և ամրապնդելու գործում։

Պետության կողմից աշխատավոր գյուղացիներին ցույց տված օգնության և կուլակության դիմադրությունը ճնշելու հետևանքով, 1928 թ. կազմակերպվեցին բազմաթիվ նոր կոլտնտեսություններ, ուժեղացավ հատկապես չքավոր գյուղացիների ձգտումը դեպի կոլեկտիվ տնտեսությունը։

Հայկական Զեյվա գյուղի մի խումբ չքավոր գյուղացիներ Հայգյուղկոոպին ուղարկած դիմումում գրել են.

«Սովետական իշխանությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ գնում է դեպի սոցիալիզմ և մեզ տանում է այդ ուղիով։ Նկատի ունենալով, որ այդ նպատակին հասնելու համար պետք է աշխատանքի և ուժերի կոլեկտիվացում կատարվի, գյուղատնտեսությունը տարվի նոր կատարելագործված ձևով ու մեքենայացման ենթարկվի և լավ գիտակցելով, որ դա բխում է մեր դասակարգային շահերից... խնդրում ենք գյուղում կազմակերպել կոլտնտեսություն»[4]։

Նույնպիսի որոշումներ ընդունեցին Դիլիջանի գավառի չքավորական խմբակների կոնֆերանսը, Էջմիածնի, Գառնիի չքավոր գյուղացիների ժողովները և բազմաթիվ գյուղացիական կոլեկտիվներ։

1928 թ. գարնան և ամռան ընթացքում կազմակերպվեցին մի քանի տասնյակ կոլտնտեսություններ։ Նույն թվականի հոկտեմբերի 1-ի տվյալներով կոլեկտիվ տնտեսությունների թիվը ռեսպուբլիկայում հասել էր 75-ի, այդ թվում Երևանի գավառում կար 32, Էջմիածնի գավառում՝ 15 և Լենինականի գավառում՝ 16 կոլտնտեսություն։ Բոլոր կոլտնտեսությունների մեջ ընդգրկված էին ավելի քան 1500 տնտեսություն, որը կազմում էր Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մոտ մեկ տոկոսը։ Ըստ տիպի կոլտնտեսությունները բաժանվում էին 64 գյուղատնտեսական արտելի, 6 հողագործական ընկերության և 5 կոմունայի[5]։

1928 թ. նոյեմբերի 17—21 տեղի ունեցավ կոլտնտեսությունների ռեսպուբլիկական առաջին համագումարը, որը ամփոփեց նախորդ տարվա արդյունքներն ու հաջողությունները և կարևոր որոշումներ ընդունեց։ Համագումարն արձանագրեց, որ պարտիայի XV համագումարի որոշումները լայն ար-

---

[4] Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ. ֆոնդ 42, գործ 940, թերթ 25։

[5] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր 1926—27 և 1927—28 թթ., Երևան, 1929, էջ 134—135։

ագանք են գտել Հայաստանի աշխատավոր գյուղացիության մեջ. 1927 թ. 7 կոլտնտեսության փոխարեն արդեն կար 80 կոլտնտեսություն։ Համագումարում բացահայտվեցին կոլտնտեսային շարժման մեջ և կոլտնտեսությունների աշխատանքներում եղած թերությունները։ Համագումարը ընդգծեց, որ միջակ գյուղացիների մի մասը դեռևս տատանվում է, թերահավատ վերաբերմունք ունի կոլտնտեսությունների հաջողությունների նկատմամբ, որ հարկավոր է գործնականում միջակին ապացուցել կոլտնտեսությունների շահավետությունն ու առավելությունը, ուժեղացնել բացատրական աշխատանքը չքավորների ու միջակների մեջ և խստիվ պահպանել ըստ աշխատանքի քանակի ու որակի վարձատրության սկզբունքը։

Համագումարը մատնանշեց, որ բոլոր պայմանները կան կոլեկտիվ շարժումը արագացնելու համար, որ «...անխուսափելի պահանջ է դարձել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի արագացումը»[6]։ Նկատի ունենալով կոլտնտեսային շարժման զարգացման հեռանկարները, համագումարը որոշեց կազմակերպել կոլտնտեսությունների ղեկավարման առանձին օրգան։ Այդ որոշմամբ Կոլտնտսեկցիան անջատվեց Հայգյուղկոոպից և վերածվեց Կոլտնտկենտրոնի։

Համագումարը հավաստիացրեց Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) պարտիային, որ Սովետական Հայաստանի «չքավոր ու միջակ գյուղացիությունը, պարտիայի լենինյան ղեկավարությամբ, մեր գյուղատնտեսությունը՝ կոլեկտիվ տնտեսությունների միջոցով վերակառուցելու գործը կտանի մինչև հաղթական վախճանը»[7]։

Կոլտնտեսությունների ռեսպուբլիկական առաջին համագումարը կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային շարժումը ամրապնդելու և առաջ տանելու համար։

Սովետական Հայաստանի կառավարությունը նյութական, տեխնիկական ու ֆինանսական մեծ օգնություն ցույց տվեց առաջին կոլտնտեսություններին՝ նրանց ամրապնդելու և հետագա զարգացումը ապահովելու համար։ Միայն 1928 թ. 59 կոլտնտեսության ստացած վարկի գումարը կազմում էր 335.823 ռուբլի[8]։

Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Սովետը 1928 թ. դեկտեմբերի 15-ին որոշում ընդունեցին «Կոլեկտիվ տնտեսությունների մասին»։ Կոլտնտեսություններին հանձնվեցին պետական օրգաններից ստացած գույքը, շինությունները, նրանց տերիտորիայում գտնվող արտադրական ու օժանդակ ձեռնարկությունները։ Կոլտնտեսությունների հողաշինարարությունը կատարվում էր պետության հաշվին, նրանց արտոնություն էր տրվում գյուղատնտեսական մեքենաներ ստանալու գործում և այլն։

1928 թ. ստեղծված կոլտնտեսությունների դրական փորձը և նրանց ամրապնդումը կարևոր նշանակություն ունեցան 1929 թ. աշխատավոր գյուղացիներին, այդ թվում միջակներին կոլտնտեսային շարժման մեջ ավելի լայնորեն ներգրավելու գործում։

---

[6] Կոլեկտիվ տնտեսությունների Համահայաստանյան առաջին համագումարի որոշումները (17—21 նոյեմբերի, 1928 թ.). Երևան, 1929, էջ 4։

[7] «Խորհրդային Հայաստան», № 270, 1928։

[8] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր 1926—27 և 1927—28 թթ., էջ 135։

1929 թ. հունվարին կայացավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի 6-րդ համագումարը, որը լսեց նաև ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի զեկուցումը գյուղում կատարվող աշխատանքի մասին և ընդունեց «Պարտիայի հերթական անելիքները գյուղում» որոշումը։ Համագումարը պարտիական կազմակերպությունների ամենահիմնական խնդիրը համարեց «կոլտնտեսությունների գաղափարի մասսայականացումը, ցանցի ամրացումը և հետագա լայն ծավալումը», մի խնդիր, «որի պատմական նշանակությունը հասկանալի և ընդունելի պիտի դարձնել գյուղական ամենալայն մասսաների համար»[9]։ Համագումարը որոշեց ավելի ուժեղացնել գյուղական պարտիական կազմակերպությունները և պարտիականների ղեկավար դերը կոլտնտեսություններում։

Համագումարի բանաձևում ասված է, որ Հայաստանի Կոմունիստական պարտիան էլ ավելի կոփվեց, դարձավ ամրակուռ «ձախ» և աջ օպորտունիզմի դեմ մղած պայքարում, ամրապնդեց իր շարքերի միասնությունը։

Ռեսպուբլիկայի առաջին հնգամյա պլանում, որ ընդունվեց Հայաստանի Սովետների 6-րդ համագումարի կողմից (1929 թ. ապրիլ), լայն միջոցառումներ նշվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ՝ ելնելով կոլտնտեսային շարժման հաջողություններից և սոցիալիզմի կառուցման խնդիրներից։ Համագումարը որոշեց բարձրացնել սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ, մասնավորապես զարկ տալ սովխոզների ու կոլտնտեսությունների կազմակերպմանը և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը։ Հնգամյա պլանով նախատեսվում էր կոլտնտեսությունների թիվը 55-ից (1928 թ. հուլիսի 1-ի դրությամբ) հնգամյակի վերջում հասցնել 540-ի, ընդգրկել կոլտնտեսությունների մեջ մոտ 28 հազար տնտեսություն, որ կկազմեր բոլոր գյուղացիական տնտեսությունների 17,2 %-ը։ Կոլտնտեսությունների արտադրանքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության արտադրության մեջ կազմելու էր 28 %[10]։

Բանվոր դասակարգի հետ միասին մեր երկրի աշխատավոր գյուղացիությունը ջերմորեն արձագանքեց ՀամԿ(բ)Պ 16-րդ կոնֆերանսի (1929 թ. ապրիլ) կոչին՝ ծավալելու սոցիալիստական մրցությունը՝ որպես «...աշխատավորներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու մշտական մեթոդ»[11]։

1929 թ. կոոպերատիվ և կոլտնտեսային շարժման բնագավառում հաջողություններ ձեռք բերվեցին շնորհիվ այն բանի, որ Սովետական կառավարությունն ու Կոմունիստական պարտիան մեծ օգնություն կազմակերպեցին աշխատավոր գյուղացիությանը։ Դա արագացրեց չքավոր գյուղացիների մուտքը կոլտնտեսություն և փոխեց միջակ գյուղացիության վերաբերմունքը հօգուտ կոլտնտեսությունների։ Պարտիան և կառավարությունը կոոպերացիան, վարկավորումը, հարկային քաղաքականությունը, մեքենամատակարարումը, կոնտրակտացիան, շեֆական աշխատանքը դարձրին գյուղի սոցիալիստական վերակառուցման հզոր լծակներ։

1929 թ. կեսերին կոոպերացված էր (սպառման և վաճառահանման դծով) Հայաստանի գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին, այդ թվում

---

[9] ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարի բանաձևերն ու որոշումները, Երևան, 1929, էջ 28։
[10] Հայաստան ՍՍՌ ՀՌՍՍ ԿՊԱ. ֆոնդ 112, գործ 120, թերթ 3։
[11] «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 781։

ծխախոտացան շրջաններում՝ տնտեսությունների 95 %-ը, բամբակացան շրջաններում՝ 60 %-ը, մետաքսագործությամբ զբաղվող տնտեսությունների 90 %-ը, գինեգործությամբ զբաղվող տնտեսությունների 75 %[12]։

Պայքարելով կուլակային և նեպմանական տարրերի դեմ, կոոպերացիան մթերում էր գյուղատնտեսական հումքն ու մթերքները և մատակարարում արդյունաբերությանն ու բնակչությանը։ Վաճառահանման ու հայթայթման ասպարեզում նա ընդգրկում էր գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի 41 %-ը, այդ թվում ամբողջ բամբակն ու մետաքսը, խաղողի ապրանքային արտադրանքի 70 %-ը[13]։

Արտադրական կոնտրակտացիոն պայմանագրերը կնքվում էին կոոպերացիայի կենտրոնների կողմից կոոպերատիվ ընկերությունների, կոլտնտեսությունների կամ գյուղացիական տնտեսությունների հետ։ Կոնտրակտացիայի միջոցով պետությունը ցույց էր տալիս գյուղացիությանը բաղմապիսի օգնություն՝ մատակարարելով տեսակավոր սերմ, գյուղատնտեսական մեքենաներ. վարկ և այլն, դրա փոխարեն ստանում էր գյուղատնտեսական արտադրանք պայմանագրով սահմանված գների համաձայն։ Կոնտրակտացիան ընդգրկում էր գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների, հատկապես տեխնիկական և հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները։ 1929 թ. Հայաստանում կոնտրակտացված էր բամբակի ամբողջ ցանքը և 5.250 հեկտար հացահատիկային ցանքատարածություն[14]։

Կոնտրակտացիան որոշում էր պետության և անհատական ու կոլեկտիվ տնտեսությունների պարտականությունները, արտադրական կապ ստեղծելով երկու կողմերի միջև։ Գնահատելով կոնտրակտացիայի դերը՝ ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն 1929 թ. օգոստոսի 26-ի որոշման մեջ կոնտրակտացիան համարում է «գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման և վերելքի հզոր լծակ»[15]։

Լայն գործունեություն էր ծավալել վարկային կոոպերացիան։ 1929 թ. գործում էին 41 վարկային ընկերություն, որոնք վարկավորում էին գյուղացիությանը, մասնավորապես չքավորներին՝ քաշող ուժ, գյուղատնտեսական մեքենաներ գնելու, այգիներ տնկելու և արտադրական այլ նպատակներով։ 1928—1929 թթ. գյուղացիները ստացել էին մոտ մեկ միլիոն ռուբլու գանազան գյուղատնտեսական գործիքներ (1926—27 թթ. անփոփոխ գներով), այդ թվում՝ մոտ հինգ հազար գութան, 540 շարքացան, 147 սերմնացան և այլն[16]։ Կոոպերացիան օգնում էր պայքարելու ցանքերի ու այգիների վնասատուների և հիվանդությունների դեմ։ Դրա շնորհիվ զգալի չափով բարձրացավ բամբակի և այլ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, կրճատվեց ցանքազուրկ և անասնազուրկ տնտեսությունների թիվը։

Աշխատավոր գյուղացիների դրության լավացման և նրանց կոլտնտեսությունների կողմը գրավելու նպատակին էր ուղղված Սովետական կառավարության հարկային քաղաքականությունը։ 1928 թ. հարկից ազատված էին 82

[12] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 1, գործ 22, թերթ 51։

[13] Նույն տեղում, թ. 53։

[14] «Խորհրդային Հայաստան», №№ 133, 142, 1929 թ։

[15] «Պրավդա», № 196, 1929։

[16] «Խորհրդային Հայաստան», № 6, 1930։

հազար տնտեսություն (բոլոր չքավորները և միջակների մի մասը)։ Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1929 թ. ապրիլի 3-ի որոշմամբ հարկերից ազատվեցին ևս 15 հազար սակավաղոր միջակ տնտեսություններ։ Այսպիսով, 1929 թ. հարկից ազատված էին գյուղացիական բոլոր տնտեսությունների 55 %-ը։ Այդ նույն ժամանակ գյուղատնտեսական հարկի 49,8 %-ը ընկնում էր միջակների վրա, իսկ թվով չնչին տեղ գրավող կուլակների վրա ընկնում էր հարկի մնացած մասը՝ 50,2%-ը՝ նախորդ տարվա 40,2 տոկոսի դիմաց[17]։ Սա նշանակում էր, որ զգալի չափերով բարելավվել էր միջակների դրությունը և ուժեղացել կուլակներին սահմանափակելու ու արտամղելու քաղաքականությունը։

Աշխատավոր գյուղացիներին տրվող վարկի գումարը, արտոնությունները ու այլ օգնությունը շարունակ ավելանում էին։ Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1929 թ. հունվարի 7-ի «Գյուղական չքավորությանը տնտեսական օգնություն ցույց տալու ձեռնարկումների մասին» որոշումով ստեղծվում է չքավորներին արտոնյալ պայմաններով վարկավորելու ֆոնդ (անհատական տնտեսությունների համար հատկացված գումարի կեսը)։ Չքավորները արտոնություն էին ստանում օգտվելու վարձակալաններից, սերմացուի կայաններից և սովխոզների ու կոլտնտեսությունների արտադրական գործիքներից։ Չքավորներին զգալի օգնություն էին ցույց տալիս նաև փոխադարձ օգնության կոմիտեները (ՓՕԿ), որոնք կոոպերացնում էին նրանց, իրենց միջոցներով ձեռք էին բերում արտադրական գործիքներ և այլն։

Չքավորների քաղաքական դերի բարձրացման համար մեծ գործ կատարեցին չքավորական խմբերը, որոնք սկսել էին կազմակերպվել 1925 թ.։ Նրանք որպես գյուղում պարտիայի ու կառավարության հենարան, կարևոր դեր խաղացին կուլակների դեմ մղվող պայքարում՝ միջակ գյուղացիության հետ համախմբվելու, նրա հետ դաշինքը ամրապնդելու և նոր կոլտնտեսություններ կազմակերպելու գործում։ Շատ կոլտնտեսություններ ստեղծվում էին հենց չքավորական խմբերի որոշմամբ։

Արտադրական կոոպերացիայի զարգացման գործում զգալի դեր խաղացին սովխոզները որպես սոցիալիստական տիպի օրինակելի ձեռնարկություններ։ 1929 թ. Հայաստանում կար 14 սովխոզ, նրանք գյուղացիներին մատակարարում էին տեսակավոր սերմեր, տունկեր, ազնվացեղ անասուններ և այլն։ 1929 թ. ամռանը ռեսպուբլիկայի մի խումբ կոլտնտեսականներ և մենատնտես գյուղացիներ մեկնեցին Հյուսիսային Կովկասի հռչակավոր «Գիգանտ» սովխոզը՝ ծանոթանալու նրա աշխատանքների հետ։

Սովխոզներն իրենց տրակտորներով վարում էին գյուղացիների հողերը՝ հեշտացնելով և արագացնելով գյուղատնտեսական աշխատանքը։

1929 թ. փետրվարին Հայաստանում կար 215 տրակտոր, որից 159 աշխատում էին գյուղկոոպերացիայի գծով[18]։ Աստիճանաբար ավելանում էր տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների թիվը։ Առաջին հնգամյա պլանի համաձայն Սովետական Միությունում կառուցվում էին տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների արտադրության գործարաններ, ստեղծ-

[17] «Խորհրդային Հայաստան», № № 83, 84, 1929 թ. և «Նյութեր Հկ(բ)Կ ԿԿ-ի հաշվետվության համար կուսակցության 8-րդ համագումարին», Երևան, 1932 թ.։

[18] Հայկական ՍՍՌ ՀՊՄՍ ԿԳԱ, ֆ. 42, դ. 210, թ. 49։

վում էր տեխնիկական բազա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

Գյուղի վերափոխման գործում վճռական դեր կատարեց բանվոր դասակարգի օգնությունը գյուղացիությանը։ Լենինականի երկաթուղային դեպոյի բանվորները, Ալավերդու և Ղափանի հանքագործները և բազմաթիվ բանվորական կոլեկտիվներ հանդիսանում էին առանձին գյուղերի շեֆեր։

Գյուղում շեֆական աշխատանք էին տանում նաև ինտելիգենցիան և Լենինյան կոմերիտմիությունը։ Կոմերիտականները կազմակերպում էին կուլտարշավ անգրագիտությունը վերացնելու, գյուղի կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

Գյուղում տարվող աշխատանքը ավելի բարելավվեց պարտիայի մեջ և սովետական ապարատում 1929 թ. անցկացված զտման հետևանքով. նրանք մաքրվեցին բյուրոկրատական, օպորտունիստական ու հաշտվողական տարրերից, որոնք խանգարում և դիմադրում էին գյուղի սոցիալիստական շինարարությանը։ Ավելի ամրապնդվեցին գյուղական պարտիական և սովետական կազմակերպություններն ու օրգանները։

Այսպիսով, Հայաստանի Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հետևողական կերպով կազմակերպում էին գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը։ 1929 թ. երկրորդ կեսին ՍՍՌՄ-ի մի շարք շրջաններում մասսայական կոլեկտիվացում սկսվեց։ Դա բեկում էր գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման մեջ։

Սովետական Հայաստանում նույնպես կային պայմաններ կոլեկտիվացումը արագ տեմպերով առաջ տանելու համար։ Դրա ապացույցը 1929 թ. հաջողություններն էին։

Միայն 1929 թ. ընթացքում կազմակերպվեց մոտ երկու հարյուր նոր կոլտնտեսություն։ 1929 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով կոլտնտեսությունների թիվը հասնում էր 245-ի՝ 1928 թ. 75-ի դիմաց, իսկ նրանց մեջ ընդգրկված տնտեսությունների թիվը կազմում էր 6.288, նախորդ տարվա 1.533 տնտեսության փոխարեն, այսինքն՝ տնտեսությունների թիվը աճել էր ավելի քան չորս անգամ, ցանքատարածությունը ավելացել էր մոտավորապես վեց անգամ։ Գյուղատնտեսության մեջ կոլեկտիվացման տոկոսը մոտավորապես 1,0-ից բարձրացավ 3,7-ի[19]։

Սա ռեսպուբլիկայի համար զարգացման աննախընթաց տեմպ էր։ Գյուղացիները պրակտիկայում համոզվում էին կոլեկտիվ տնտեսությունների և համատեղ աշխատանքի առավելության մեջ։ Որպես կանոն կոլտնտեսությունները տեխնիկապես լավ էին վինված, վարը և ցանքը կատարում էին կարճ ժամանակամիջոցում, բարձր էր բերքատվությունը։ Ահա մի քանի համեմատական տվյալներ։

1929 թ. յուրաքանչյուր հազար հեկտար վարելահողին ընկնում էր. կոլտնտեսություններում՝ մոտ երեք տրակտոր, 42 դուբան, 13 շարքացան, իսկ ամբողջ Հայաստանում, ներառյալ անհատական տնտեսությունները՝ մոտ կես տրակտոր, 28 դուբան, կես շարքացան։ Շարքացանով ցանված էին կոլտնտեսությունների ցորենի ցանքի 27,9 %-ը և բամբակի ցանքի 86,8 %-ը։

---

[19] Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 72, թ. 13 և «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30)», Երևան, 1931, էջ 101։

իսկ ամբողջ Հայաստանում համապատասխանաբար՝ 1,5 և 20,2 %։ Կոլտնտեսություններում գտված ու ախտահանված էր սերմի կեսից ավելին[20]։ 1929 թ. հացահատիկի բերքատվությունը 20,0 %-ով, բամբակինը՝ 30 %-ով և կարտոֆիլինը՝ 13 %-ով[21] բարձր էր միջին ռեսպուբլիկական ցուցանիշներից։

1929 թ. հոկտեմբերի 13-ին ռեսպուբլիկայում տոնվեց «Բերքի և կոլեկտիվացման օրը» տրադիցիոն տոնը։ Կազմակերպված ցուցահանդեսներում ներկայացված էին կոլեկտիվ և անհատական տնտեսությունները։ Կոլտնտեսություններն իրենց հաջողություններով առաջին տեղն էին գրավում։ Էջմիածնի ցուցահանդեսում մասնակցում էին տասնմեկ կոլտնտեսություն, որոնցից ինն արժանացան մրցանակի։ Մեծ հաջողություններ ունեին Էջմիածնի «Անաստված», Վերին Թուրքմենլուի (այժմ Ապագա), Վերին Խաթունարխի ու Ներքին Խաթունարխի կոլտնտեսությունները։ Լենինականի գավառային ցուցահանդեսին մասնակցող բոլոր կոլտնտեսությունները ճանաչվեցին օրինակելի։ Ղուրդուղուլու շրջանի Նորապատ գյուղի (այժմ Հոկտեմբեր) կոլտնտեսությունն արժանացավ «Զարյա Վոստոկա» թերթի մրցանակին։

«Բերքի և կոլեկտիվացման օրը» նոր խթան հանդիսացավ կոլտնտեսային շարժման համար։ Միայն մեկ օրում Լոռի-Փամբակի գավառում կազմակերպվեց տաս նոր կոլտնտեսություն։

Հանձին կոլտնտեսային կարգի գյուղացիները տեսնում էին աղքատությունից ու մշտական կարիքից ազատվելու և նոր, ունևոր ու երջանիկ կյանք ստեղծելու ուղին։

Կոլտնտեսային շարժումը զարգանում էր ոչ միայն նոր կոլտնտեսությունների կազմակերպման միջոցով, այլև հների խոշորացումով։ Ուժեղանում էր չքավոր և հատկապես միջակ գյուղացիների ցանկությունը՝ ընդգրկվելու կոլտնտեսության անդամ։

Կոլեկտիվացման հաջողություններով հատկապես աչքի էր ընկնում Էջմիածնի գավառի Ղուրդուղուլու շրջանը, որտեղ 1929 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով կոլտնտեսությունների մեջ էին գյուղացիների 17,5 %-ը[22]։ Կոլեկտիվացման տոկոսը բարձր էր նաև Ղամարլուի, Հրազդանի և Զանգիբասարի շրջաններում։ Իսկ Նորապատ, Ջաֆարապատ (այժմ Գետաշեն), Աղջարխ (այժմ Արևիկ), Քյալագարի (այժմ Շենավան) և բազմաթիվ այլ գյուղերում կոլտնտեսության մեջ էր գյուղացիների կեսը կամ ենշող մեծամասնությունը։

Կոլտնտեսային շարժումը, ինչպես տեսնում ենք, զարգանում էր հատկապես Արարատյան դաշտավայրի շրջաններում։ Դա պատահական չէր։ Այստեղ գյուղատնտեսական կոոպերացիան ավելի զարգացած էր, շատ կոլտնտեսություններ արդեն ունեին մեկ-երկու տարվա փորձ, ավելի շատ տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ կար։

Ռեսպուբլիկայի մյուս, հատկապես լեռնային շրջաններում կոլեկտիվացման տոկոսը ավելի ցածր էր, բայց վերելքը նույնպես ակնառու էր և հաստատ։

Կոլտնտեսությունների կազմակերպումը և զարգացումը տեղի էր ունենում դասակարգային սրված պայքարի պայմաններում։ Մարքսիզմ-լենի-

[20] ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 22, թ. 58։
[21] «Խորհրդային Հայաստան», № 235, 1929 թ.։
[22] ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1. գ. 289, թ. 2։

նիզմը սովորեցնում է, որ սոցիալիզմի կառուցման որոշ էտապում, քանի դեռ լուծված չէ «ով-ում»-ի հարցը, դասակարգային պայքարը ավելի է սրվում, իշխանությունից զրկված բուրժուազիան և շահագործող դասակարգերը տասնապատկում են իրենց դիմադրությունը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը կատաղի կերպով դիմադրում էր մեր երկրի վերջին շահագործող ամենաբազմամարդ դասակարգը՝ կուլակությունը, որին պաշտպանում էին օպորտունիստական ու նացիոնալիստական տարրերը։

1928—1929 թթ. կուլակները ուժեղացրին իրենց պայքարը Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության կողմից անցկացվող բոլոր միջոցառումների ու կամպանիաների դեմ։ Դասակարգային թշնամին դիմադրում էր տարբեր ձևերով ու մեթոդներով։

Կուլակներին հաջողվեց մի շարք կոլտնտեսությունների խոտի և հացահատիկի դեղերը հրկիզել, անասունները փչացնել և այլն, ինչպես, օրինակ, Դիլիջանի գավառի Դովեղ գյուղում, Լոռանում, Լոռու գավառի Դսեղ (այժմ Թումանյան), Ղալաչա և Ղուրդուղուլու շրջանի Մարգարա գյուղերում։ Կուլակները այրեցին կոլտնտեսության կալը Սիսիանի շրջանի Շաքի գյուղում, Դիլիջանի գավառի Պառավաքար գյուղի կոլտնտեսության գոմը, որտեղ վնասվեց 14 գլուխ անասուն։

Դասակարգային թշնամիներին հաջողվել էր Սարդարապատի (այժմ Հոկտեմբերյան) և Խաթունարխի կոլտնտեսությունների մեջ խցկել իրենց գործակալներին, որոնց միջոցով աշխատում էին քայքայել Արարատյան դաշտավայրի այդ ուժեղ կոլտնտեսությունները։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Դրանից հետո թշնամիները փոխեցին պայքարի մեթոդը։ Նրանք ցանկություն հայտնեցին «կոլխոզ կազմակերպել» և խնդրեցին այդ նպատակի համար հող տրամադրել Այղր լճի շրջակայքում։ Կեղծ կոլտնտեսություններ կազմակերպելու փորձեր արվեցին նաև այլ տեղերում։ Այստեղ էլ իր նպատակին չհասնելով, զազազած թշնամիները մահափորձ կազմակերպեցին կոլտնտեսությունների նախագահների դեմ։

Կոլտնտեսային շարժման աճման հետ միասին թշնամու դիմադրությունը դառնում էր ավելի կատաղի։ 1928 թ. դեկտեմբերի վերջերին Բասարգեչարի շրջանի Դաշքենդ գյուղում կուլակները դաշույնի 34 հարվածով գազանաբար սպանեցին գյուղսովետի նախագահ Հումբաթ Մահմեդովին։ Դեկտեմբերի 30-ի գիշերը Նոր Բայազետի գավառի Բասարգեչարի շրջանի Փոքր Մազրա գյուղում թշնամու կողմից սպանվեց Գավգործկոմի նախագահի տեղակալ, չրավոր գյուղացու զավակ Մովսես Խաչինյանը։ Լճմիածնի գավառի Ալիբեքլու (այժմ Աթարբեկյան) գյուղում կուլակները որոշել էին տեռորի ենթարկել գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղարին և մի շարք ակտիվիստների։ Նրանց հաջողվեց գազանաբար խեղդել ակտիվ կոմերիտական, բատրակ Խաչիկ Պողոսյանին և դիակը նետել ջրտրը։

Սովետական իշխանությունը ստիպված էր խիստ միջոցների դիմել կուլակների և մյուս տարրերի դիմադրությունը ճնշելու համար։ Հաղթահարելով թշնամու պայքարը՝ ծավալվում և զարգանում էր կոլտնտեսային շարժումը։ Աշխատավոր գյուղացիությունը դասակարգային թշնամու դիմադրությանը պատասխանում էր կոլտնտեսությունների մեջ մտնելով, ձախողելով թշնամու պլանները։

1929 թ. նոյեմբերի 18—20-ին տեղի ունեցավ ՀԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը,

որն ամփոփեց կոլտնտեսային շարժման հաջողությունները և ընդունեց մի շարք բանաձևեր՝ «Գյուղատնտեսության զարգացման և սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրները», «Կոլտնտեսությունների շինարարության հերթական խնդիրները» և այլն։ Պլենումը մատնանշեց, որ անցած տարին վճռական հաջողությունների տարի էր գյուղի սոցիալիստական շինարարության բնագավառում, որ եթե սկզբում կոլտնտեսային շարժումը գլխավորապես ընդգրկում էր չքավոր գյուղացիներին, ապա այժմ նա դարձել է չքավոր և միջակ գյուղացիության լայն մասսայական շարժում, միջակ գյուղացին, գյուղատնտեսության կենտրոնական դեմքը, արդեն պոկվում է կապիտալիստական ուղուց և շրջվում դեպի կոլտնտեսությունները[23]։ Դա մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբն էր Հայաստանում։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության նվաճումները պայմանավորված էին Սովետական Միության ընդհանուր հաջողություններով։ Բարդ միջազգային դրության պայմաններում հաջողությամբ կենսագործվում էր առաջին հնգամյա պլանը։ Սովետական Միության բանվոր դասակարգը սոցիալիստական մրցում ծավալեց՝ ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու, արտադրությունն ավելացնելու, աշխատանքի արտադրողականություն բարձրացնելու համար։ Սովետական գյուղի աշխատավորները բանվոր դասակարգից հետ չմնացին։ Կոլտնտեսային շարժումը արագ տեմպով զարգացավ։ Արմատական բեկում կատարվեց գյուղատնտեսության զարգացման ընթացքի մեջ։ Դա նշանակում էր, որ չքավոր գյուղացիների հետ միասին կոլտնտեսությունների մեջ էին մտնում միջակները։ Դեպի կոլտնտեսությունները միջակի կատարած շրջադարձը հանդիսանում էր մեծ հաղթանակ։

1929 թ. մեր երկրի պատմության մեջ հայտնի դարձավ որպես մեծ բեկման տարի։

* * *

Այսպիսով, լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա և ՍՄԿՊ XV համագումարի որոշումների համաձայն, Հայաստանում, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, գյուղատնտեսությունը զարգանում էր սոցիալիզմի ուղղությամբ։ Սահմանափակվում էր կապիտալիզմի զարգացումը գյուղում, ջախջախվում կուլակության համառ դիմադրությունը։ Գյուղատնտեսության մեջ «ով-ում»-ի հարցը լուծվում էր սոցիալիզմի օգտին։

1928—1929 թթ. վճռական նախադրյալներ ստեղծվեցին գյուղատնտեսության սոցիալիստական շինարարությունը ծավալուն կերպով առաջ տանելու համար։ Հայաստանը սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին թեվակոխեց համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու, գյուղի սոցիալիստական վերափոխման ժամանակաշրջանը։

---

[23] ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 22, թ. 114։